ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն Ա-Հ-Լ-14

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան «13» 02 2019թ.

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Մ. Մանասյանի (այսուհետ՝ Շնորհատու), որը գործում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գևորգյանի (այսուհետ՝ Շնորհառու), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ *«Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ»* ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. *Պայմանագրի առարկան*

1.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Շնորհառուին հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ *«Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» (04.02.01.08) ծրագրով* ***259,565,800 (երկու հարյուր հիսունինը միլիոն հինգ հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ,*** ներառյալ ԱԱՀ-ն, իսկ Շնորհառուն Ծրագիրը պարտավորվում է իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված Շնորհառուի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N1 հավելվածով:

2. *Կողմերի իրավունքները և պարտավորությունները*

2.1. Շնորհատուն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Շնորհառուի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Ծրագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, Շնորհառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Շնորհառուն ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Շնորհառուն երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները,

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2 Շնորհառուն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Շնորհատուի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Շնորհատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Շնորհատուն պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Շնորհառուին.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Շնորհառուն պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Շնորհատուի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Շնորհատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով Շնորհատուին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն.

2.4.4.1. ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման վերաբերյալ կազմված եռամսյակային հաշվետվությունը (հավելված N2)՝ ներկայացնել հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4.2. փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություն՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը՝ համաձայն սույն պայմանագրի N5 հավելվածի, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Շնորհատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6 Շնորհատուի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Շնորհառուն պարտավորվում է անվճար՝ Շնորհատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.8. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները Շնորհատուի կողմից ընդունվելուց հետո՝ միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները /խնայողությունները/ վերադարձնել ՀՀ պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.9. Սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարում ներառված ավելացված արժեքի հարկի գծով հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2019 թվականին ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1. Շնորհատուն Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Շնորհատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Շնորհառուին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Շնորհատուն ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շնորհառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է Ծրագրի կատարման համար Շնորհառուին, որպես դրամաշնորհ վճարել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարը:

4.2. Շնորհառուն՝ հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդող ամսվա 5-ը ներկայացնում է ծախսերի կատարման հայտ և հաշվարկ-բացատրագիր, իսկ անհրաժեշտության դեպքում հունվար ամսվա հայտը կարող է ներկայացվել տվյալ տարվա հունվար ամսվա ընթացքում՝ սույն պայմանագրի N 4 հավելվածով սահմանված ձևաչափով, իսկ Շնորհատուն՝ այն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտով պահանջվող գումարը վճարում է Շնորհառուին: Հայտով պահանջվող ֆինանսավորման չափը չի կարող գերազանցել սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3

հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով հաշվետու ամսվա համար նախատեսված գումարի չափը:

4.3. Եռամսյակի ավարտից հետո Շնորհառուն պարտավորվում է Շնորհատուի կողմից սահմանված ժամկետներում ներկայացնել բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվություն՝ համաձայն N 5 հավելվածի և ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվություն՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 2 հավելվածով հաստատված ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշներին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Շնորհառուն պարտավորվում է Շնորհատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Շնորհառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Շնորհատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Շնորհառուին վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կազմված է 2 օրինակից, 12 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3, 4 և 5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՇՆՈՐՀԱՏՈՒ	ՇՆՈՐՀԱՌՈՒ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական շենք N3	ք. Երևան, Էրեբունի 12
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011008639	Հ/Հ 900018006149
ՀՎՀՀ 02508046	ՀՎՀՀ 00403436
Մ. Մանասյան _____	Տնօրեն _____ Ա. Գևորգյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
2019 թվականի ---Փետրվարի 13--- -ին կնքված
N ԱՄՀ-19 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման, կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձարկման միջոցառումներ:	Կենդանիների բրուցելոզ և այլ հիվանդությունների վարակամերժության աստիճանի որոշմանն ուղղված լաբորատոր փորձարկումների իրականացում:	- կենդանիների բրուցելոզ հիվանդության ախտորոշմանն ուղղված լաբորատոր փորձարկումների իրականացում: - կենդանիների բրուցելոզ հիվանդության՝ հաստատող մեթոդով ախտորոշմանն ուղղված լաբորատոր փորձարկումների իրականացում: - կենդանիների այլ հիվանդությունների ախտորոշմանն ուղղված լաբորատոր փորձարկումների իրականացում:	Անասնաճարակային կայուն ֆոնի ապահովում: Կենդանիների բրուցելոզ և այլ հիվանդությունների տարածվածության աստիճան:	31.12.2019	259,565,800
Ընդամենը						**259,565,800**

ՇՆՈՐՀԱՏՈՒ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք.Երևան, Կառավարական շենք N3
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011008639
ՀՎՀՀ 02508046

_____ Մ.ՄԱՆԱՍՅԱՆ

ՇՆՈՐՀԱՌՈՒ

«Հանրապետական անասնաբուժասանիտարական
և բուսասանիտարական լաբորատորիաների
ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Էրեբունի 12
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900018006149
ՀՎՀՀ 00403436

_____ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված 2
2019 թվականի փետրվարի 13-ին կնքված
N ՆԱԿ-14 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը — «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ

Ծրագրի անվանումը — «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ»

Միջոցառման նկարագրությունը	Ցուցանիշը	Նախատեսվում է իրականացնել 2019 թվականի ընթացքում ընդ որում աճողական				Ծանոթություն
		I եռամսյակ	I կիսամյակ	ինն ամիս	տարի	
		քանակը	քանակը	քանակը	քանակը	
1	2	3	4	5	6	7
Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման, կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննությունների իրականացում	Լաբորատոր փորձաքննությունների քանակ, հատ	159547	359138	558729	801377	

ՇՆՈՐՀԱՏՈՒ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ք. Երևան, Կառավարական տուն N3
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011008639
ՀՎՀՀ 02508046

.... Ա. Մանասյան

ՇՆՈՐՀԱՌՈՒ

«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ

ք. Երևան, Էրեբունի 12
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900018006149
ՀՎՀՀ 00403436

.... Ա. Գևորգյան

Հավելված 3
2019 թվականի սեպտեմբերի 13-ին կնքված
N 1124 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը՝ **«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ**

2. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
04	02	01	08	104007

3.Հիմնարկին սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը՝ **ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**

4.Գանձապետական բյուջետային կամ արտաբյուջետային հաշվի հաշիվների համարը՝ **900018006149**

Ծրագրի անվանումը՝ **«Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ»**

(հազար դրամ)

Ձեռք բերվող ապրանքի,աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին՝ աճողական											
		առաջին եռամսյակ			առաջին կիսամյակ			ինն ամիս			տարի		Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ	4637	0.0	34,608.8	51,913.2	73,543.7	95,174.2	116,804.6	138,435.1	160,065.6	181,696.1	207,652.6	233,609.2	259,565.8	259,565.8
ԸՆԴԱՄԵՆԸ		**0.0**	**34,608.8**	**51,913.2**	**73,543.7**	**95,174.2**	**116,804.6**	**138,435.1**	**160,065.6**	**181,696.1**	**207,652.6**	**233,609.2**	**259,565.8**	**259,565.8**

ՇՆՈՐՀԱՏՈՒ

ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն N 3
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011008639
ՀՎՀՀ 02508046
...........................Մ. Մանասյան

ՇՆՈՐՀԱՌՈՒ

«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Էրեբունի 12
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900018006149
ՀՎՀՀ 00403436
...........................Ա. Գևորգյան

Հավել...
2019 թվականի ---փետրվարի--- ---13--- -ին կնքված
N ---ԱԱԿ-14---պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀԱՅՏ N

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
կազմակերպության անվանումը

900018006149
հաշվի համարը

Բաժին 04 Խումբ 02 Դաս 01 Ծրագիր 08
դասակարգում

2019
ամսաթիվ

«Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ»

ՀՈԴՎԱԾ	ԳՈՒՄԱՐԸ		ԼՐԱՑՎՈՒՄ Է ՀՀ ԳՆ ԱՇԽԱՏԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ
	փոխանցումով	կանխիկ	
4637			
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՓՈԽԱՆՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ԲԱՌԵՐՈՎ՝ ____________________

ԿԱՆԽԻԿ ԳՈՒՄԱՐԸ ԲԱՌԵՐՈՎ՝ ____________________

ՍՏԱՑՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Գանձապահ՝ ____________________
(անուն, ազգանուն, անձնագրային տվյալներ)

Առաջին կարգի ստորագրություն՝ _____

Կ. Տ.

Երկրորդ կարգի ստորագրություն՝ _____

Ծանուցում՝ Սույն հայտը ուժի մեջ է պահանջվող ֆինանսավորման մասին մանրամասն հաշվարկ-բացատրագրի առկայության դեպքում

Հավ...

2019 թվականի *փետրվարի* *13*-ին կնքվ...
N *ՄԱՀ-Լ-1*4 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N __

ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ

........2019թ. - ....2019թ. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը՝ **«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ**
2. Փոստային հասցեն՝ **info@armlab.am**
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդն ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը՝ **ՀՀ գյուղատնտեսության նախարարություն**
5. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ 1
   (ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2)

6. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

Բաժին N	04
Խումբ N	02
Դաս N	01

7. Ծրագրի կոդը — 08

8. Ծրագրի անվանումը՝ **«Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ»**

9. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդն՝ ըստբյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման — **104007**

10. Չափման միավորը՝ **հազար դրամ**

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի անվանումները	NN	Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ	Փոփոխություններ տարեկան նախահաշվում: ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում)	ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում)	Վերադասի կողմից	Տարեկան ճշտված նախահաշիվ	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր): Ընդամենը	Որոնցից՝ 30 օրից անց պարտքեր	Դրամարկղի մնացորդ
Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը=Դ+Ե+Զ+Է	Թ	Ժ	ԺԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ
1100000	***Ընթացիկ ծախսեր,***	x	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	այդ թվում՝	x											
1150000	***5. Դրամաշնորհներ***	x	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0

	Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	4637											
1000000	*Ընդամենը ծախսեր*	x	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0

« » _____ **2019թ.**

Տնօրեն՝ _____
(անունը, ազգանունը)

Հաշվապահ՝ _____
(անունը, ազգանունը)

Կ. Տ.